Ըմթռայս նորակառոյց ճեմարանիս ի նըպաստ տասն հազար ռուբ. կտակել ի յիշատակ սիրելի որդւոյն իւրոյ Պետրոսի Թումանեանց հանգուցելոյ առ Տէր, նոյն գումարի տոկոսով և Թումանեանց անուամբ հոգևոր որդեգիր պահելու բաղձանօք:

Նոյն բարեհամբաւ տիկնոջ առաքինասէր և բարեգործ արդիւնքները ոչ սակաւ լինելով, — յորոց մինն է՝ ինչպէս Դեկտ. 31ին գրած էր մեզ ի Մոզդոկէ Բարեկր. Յովհ. Աւագ քահանայ Խոսրովեանց՝ ի տօնավաճառէն Նիժնայի բերել տուած 130 փթանոց և 2000 մանէթէն աւելի արժողութեամբ մեծ զանգակը, որ նոյն ամսոյ 29ին փառաւոր հանդիսիւ զետեղեալ է ի զանգակատան Ս. Աստուածածնին Աւագ Եկեղեցւոյ տեղւոյն, — անշուշտ եմք զի յիշեալ տիկնոջ առաքինասէր ըղձանաց երախտիքը անմոռաց յիշատակ կրկանգնէ նաև մեր նորակառոյց ճեմարանիս վերայ նոյն բարի նպատակին իրագործուելով, որոյ համար կրաղձամք յետ սակաւուց ստոյգը աւետել մեր Ազգայնոց հանդերձ շնորհակալութեամբ:

~~~~

ԽԱԼԻՊԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԻ ՎԱԽՃԱՆԻԼԸ.

Նոր Նախիջևան քաղաքը զրկուեցաւ Ապրիլ 24ին իւր գերահռչակ և ազգասէր իշխանաւորաց մէկէն, որ էր Աղա Յարութիւն Պօղոսեան Խալիպեանց: Ութսուն և հինգամեայ ծերունին իւր անձնական սակաւագիւտ կատարելութիւններովը բոլոր կենացը մէջ մեծ ազդեցութիւն ունեցած էր այն քաղաքին և շրջակայից բնակիչներուն և գործերուն վրայ. որով մինչև վերջը մեծարոյ և պատուելի հանդիսացած էր ոչ միայն ազգայնոց, այլ և օտարազգի մեծամեծաց և ժողովրդոց առհասարակ: Նախիջևանցիք հինգ վեց անգամ ընտրած էին զինքը իրենց Քաղաքագլուխ (Голова), ուստի և 15 տարի կառավարեց նա այն քաղաքը ու քովի գեղերը, անաչառ, հեռատես, երկայնամիտ և խոհական կառավարութեամբ: Եւ թէպէտ ի ծերութեան հասակին չկամեցաւ այլ ևս շարունակել այն պաշտօնը, բայց իւր քաղաքակիցքը չէին դադարիր նորա հանճարոյն և փորձառութեանը դիմելէն՝ մինչև կենացը վերջին ժամանակներն անգամ:

Խալիպեան իշխանին բնատուր ձիրքերը, արթուն վաճառաշահութիւնը, անխոնջ աշխատասիրութիւնը, պատուաւոր յարաբերութիւնները, և մանաւանդ հաստատուն բարեպաշտութիւնը և ազգասէր առատաձեռնութիւնը, պատրաստեցին իրեն այն հարստութիւնը՝ որով Ռուսաստանի Հայոց առաջին մեծատուններէն մէկը եղած էր. բայց ինքը ասով ըստ իմիք աւելի ևս գերազանցեց քան զբազում մեծատունս՝ որ գիտցաւ իւր հարստութեան նշանաւոր մէկ մասը ի գործ դընել յօգուտ հասարակաց, մանաւանդ իւր ազգայնոց:

Յայտնի է ամենուն՝ որ այս բարեյիշատակ իշխանը մեծագումար օժանդակութեամբ գործակից եղաւ Խրիմու Թէոդոսիա քաղաքին մէջ Ազգային ուսումնարան բացուելուն և յառաջանալուն 1858էն մինչև այս տարի: Անկից ելած հարիւրաւոր աշակերտք, ցրուած են այժմ Ռուսաստանի գրեթէ ամենայն գլխաւոր քաղաքները, իրենց գովելի ընթացքովը կենդանի վկայք են և անժխտելի ապացոյցք նոյն ուսումնարանին օգտաւէտութեանը:

Խալիպեան Յարութիւն Աղայն վախճանեցաւ Թայղան (Թականրոկ) քաղաքը իւր տանը մէջ. երկրորդ օրը՝ բազմութեամբ ազգային եկեղեցականաց և իշխանաւորաց, որ եկեր էին Նախիջևա-
~~~~

նէն, եւ եւ Թայղանի ժողովրդոց խուռն բազմութեան յուզարկաւորութեամբը, մեծաշուք հանդիսով փոխադրեցաւ հանգուցելոյն մարմինը ի Նոր Նախիջեւան երկաթուղիով՝ առանձին վարձուած արտաքոյ կարգի ընթացքով։ Ապրիլի 27ին նոյնպիսի մեծահանդէս յուզարկաւորութեամբ թաղուեցաւ՝ ըստ հեռագրական հրամանի Վեհափառ Կաթողիկոսին՝ ի գաւթի Եկեղեցւոյ Սրբոյն Նիկողայոսի իւր ազգատոհմին սեպհական շիրմին մէջ։--Խալիպեան իշխանին հիւանդութեան վերջին օրերը քովը գտնուեցաւ ըստ հրաւիրանաց նորա՝ Գերապատիւ Գաբրիել Սրբազան Եպիսկոպոս Այվազեան, որեւ պարագլուխ լինելով հանդիսից յուզարկաւորութեան հանգուցելոյն՝ Նախիջեւանի Մայր եկեղեցւոյն մէջ դամբանական ճառ մի եւս խօսեցաւ վրան, զոր յոյս ունիմք ձեռք բերելու եւ հրատարակելու ամառդրոյս մէջ։ — Մաղթեմք ուրեմն յԱստուծոյ լուսաւորել զՀոգի հանգուցեալ ազգասէր Խալիպեան իշխանին, եւ անպակաս առնել յազգէս նորա անձնական եւ ընկերական կատարելութեանցը ժառանգորդ եւ հետեւող իշխանաւորներ։

ԳԵՐ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆՑ

Ամսոյս 19ին զմիջաւուրքք՝ Գեր. Գաբրիել Եպիսկոպոս Այվազեանց եկն եհաս ի Մայր Աթոռս՝ կարեւոր պաշտօնով։

ՀԱՇՎԻՆԵԿՏԻՒ

ԵԼԵՄՏԻՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻՆ ՇԱՄԱԽԻՈՅ

Խոշգրոնեան Աբարար ամսագրոյ.

Կենդրեմ պատուական ամսագրոյդ միջոցաւ հրատարակել նամակիս հետ ուղարկուած Շամախւոյ Թէմական—Ազգային Դպրոցին 1870 թուականին եկամտից եւ ծախուց, եւ ի նպաստ նոյն ուսումնարանին բաժանորդական նուիրաբերմանց համառօտ հաշուէցուցակները ի տեղեկութիւն մեր համազգաց

ԱՆԴՐԻԷԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի 27 Մարտի 1871 -ի

Ի Շամախի

ՑՈՒՑԱԿ

Խոշգանորդական նուիրատուաց Հայոց Ժողովրդոց Շամախւոյ հաղորդեալ է Նպաստ Թէմական Ազգային Դպրոցին Հայոց Շամախւոյ է 1870 ամի։

---

1. Կարապետ Բէկ Լազարեանց քսան բաժին։
2. Կարապետ Քալանթարեանց հինգ բաժին։
3. Նիկոլայ Կաճկաճեանց չորս բաժին։
4. Բաղդասար Նազարեանց. Մարտիրոս Միրզաբեկեանց՝ իւրաքանչիւրը երեք բաժին։

5. 1.) Տեսուչ Թեմին Հայոց Շամախւոյ Անդրէաս Արքեպիսկոպոս, 2) Յովհաննէս Խլարեանց, 3) Աստուածատուր Զաքարեանց, 4) Միքայել Ղարաղաշեանց. 5) Յակոբ Պողոսեանց, 6) Նուխեցի Գրիգոր Դիլտարեանց, 7) Գէորգ Տէր Յովհաննիսեանց, 8) Յակոբ Կեօկչայեանց, 9) Գէորգ Թումանեանց, 10) Կարապետ Տէր Ստեփաննոսեանց. 11) Մարտիրոս Նիազեանց. 12) Թադէոս Եգանեանց. 13) Յակոբ Միքիտեանց. 14) Երեմեայ Պողովեանց. 15) Միքայել Ավշարեանց. 16) Մովսէս Աշուղեանց իւրաքանչիւրը՝ երկու բաժին։

6 1) Միքայել Բէկլարեանց. 2) Յարութիւն Սահակեանց. 3) Կարապետ Մատթէոսեանց. 4) Պետրոս Վլասեանց. 5) Յովհաննէս Տէր Սարգսեանց. 5) Սարգիս քահանայ Փերմերտեանց. 7) Գալուստ Թառոյեանց. 8) Յարութիւն Բարդամեանց 9) Յարութիւն Տէր Եսայեանց. 10) Յարութիւն Տէր Գասպարեանց. 11) Յակոբ Մարտանեանց. 12) Մովսէս Ռոստամեանց. 13) Գաբրիել Նաջարեանց. 14) Բախիշ Սարգիսբէկեանց. 15) Ռաֆել Մարտինեանց. 16) Յարութիւն Քարամեանց. 17) Սահակ քահանայ Տէր Սահակեանց. 18) Համբարձում Ներսեսեանց. 19) Աբրահամ Գասպարեանց. 20) Աւետիք Բալասանեանց. 21) Խաչատուր Եղիազարեանց իւրաքանչիւր մի բաժին։

Բոլորի գումարն է 88 բաժին, —264 ռուբլի։